ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 1

2018 թվականի սեպտեմբերի 18-ին տեղի ունեցավ ՀՀ Կոտայքի մարզի Գեղաշենի Ռազմիկ Ստեփանյանի անվան միջնակարգ դպրոցի 9Բ դասարանի դասարանական և ծնողական ժողովը: Ժողովին ներկա էին բոլոր ծնողները և դասղեկ Արամ Մելիքյանը :

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

1. Դասարանի ծնողխորհրդի անդամների և նախագահի ընտրություն:
2.2018-2019 ուստարվա խնդիրներն ու անելիքները:
3. Դասագրքերի հավաքագրումն ու հանձնումը:
4. Ընթացիկ հարցեր /կարգապահություն, ռեժիմ, հերթապահություն/:

1.Լսեցին.- Դասարանի ծնողխորհրդի անդամների և նախագահի ընտրություն հարցը:

Դասղեկ Արամ Մելիքյանի ելույթը, որը ներկայացրեց առաջին ծնողական ժողովից հետո հաճախումների մեկամսյա պատկերը:
Առաջարկվեց նոր ուսումնական տարվա համար ձևավորել 9-րդ <<Բ>> դասարանի ծնողական խորհուրդ՝ նախագահ և չորս անդամ կազմով:

Առաջարկվեց հինգ անդամների թեկնածություն.
1. Մկրտչյան Ամալյա
2. Գեղամյան Արփինե
3. Մարգարյան Լիլիթ
4. Բաղալյան Մարինե
5. Ղազարյան Ալվարդ

Նախագահի թեկնածու առաջադրվեց Մկրտչյան Ամալյան, որից հետո կատարվեց քվեարկություն: 5 կողմ, 0 դեմ ձայնով Ամալյա Գինոսյանը ընտրվեց նախագահ:

Որոշեցին.
9-րդ <<Բ>> դասարանում ձևավորել ծնողական խորհուրդ հետևյալ կազմով՝
1. Մկրտչյան Ամալյա /նախագահ/
2. Գեղամյան Արփինե/անդամ/
3. Մարգարյան Լիլիթ/անդամ/
4. Բաղալյան Մարինե/անդամ/
5. Ղազարյան Ալվարդ/անդամ/

2.Լսեցին.-2018-2019 ուստարվա խնդիրներն ու անելիքների և դասագրքերի հավաքագրումն ու հանձնման հարցը:

Դասղեկ Արամ Մելիքյանը նշեց, որ ծնողները մանկավարժական կոլեկտիվի հետ միասին պետք է փորձեն միասնական պահանջներ ձևավորել
երեխաների դաստիարակության հիմնախնդիրների հարցում:

Դասղեկը հորդորեց ծնողներին աջակցել դպրոցին՝ ուսուցիչներին պարտադիր կրթություն իրականացնելու, սովորողներին ուսուցման և դաստիարակության համար անհրաժեշտ պայմաններ ապահովելու համար:

Որոշեցին.

Օգնել դասղեկին և ուսուցիչներին՝ ձեռք բերելու անհրաժեշտ տետրեր, գրենական պիտույքներ, կազմակերպված իրականացնել դասագրքերի վարձավճարների հավաքագրումը , որը պետք է կազմակերպի ծնողական խորհուրդը՝ համագործակցելով գրադարանավարի հետ:
Տարվա ընթացքում իրականացվող միջոցառումների ժամանակ անհրաժեշտ օգնություն ցուցաբերել անապահով ընտանիքի երեխաներին:

3. Լսեցին. - Ընթացիկ հարցեր /կարգապահություն,ռեժիմ,հերթապահություն/:

Դասղեկ Արամ Մելիքյանը նշեց, որ նոր ուսումնական տարում
դպրոցը աշխատելու է հնգօրյա ռեժիմով: Դասերը սկսվելու են 9⁰⁰-ին, ավարտվելու են 15⁰⁰-ին: Դասղեկը հորդորեց ծնողներին հետևողական լինել իրենց երեխաների նկատմամբ, հետևել, որ աշակերտները դպրոց հաճախեն պայուսակով, դասագրքերով, օրագրերով և դպրոցական համազգեստով:
Ենթարկվեն դպրոցի ներքին կարգապահական կանոններին և աշակերտավայել վարք դրսևորեն դպրոցում: Պահել ծնող-դասղեկ-աշակերտ կապը և անհրաժեշտության դեպքում այցելեն դպրոց՝ իրենց երեխաների վրա վերահսկողությունը մեծացնելու նպատակով:

Որոշեցին.

Առավել ուշադիր և հետևողական լինել, որ աշակերտները դպրոց հաճախեն աշակերտին վայել կեցվածքով, լինեն կարգապահ և դասերին պատրաստ:

Ծնողական խորհրդի նախագահ՝ Ամալյա Մկրտչյան
Քարտուղար՝ Արփինե Գեղամյան